ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Հ/40/709-21 առ "23" 03 2021թ.

Ձեր _____ առ " ____ " _____ 2021թ.

«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ տնօրեն
տիկին Ա. Օհանյանին

[Պայմանագրի մասնակի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի տիկին Օհանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Գնորդ) կարիքների համար համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների (այսուհետ՝ նաև Ապրանք) ձեռքբերման նպատակով 22.12.2020թ-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, որը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ կետի, 1-ին մասի հիման վրա, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ-ի փետրվարի 5-ին կնքվել է N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Ս/թ փետրվարի 23-ին Ձեզ է ուղարկվել համաձայնագրի նախագիծ, որի մեջ առկա են եղել մի շարք տեխնիկական վրիպակներ, այնուհետև 25.02.2021թ-ին ուղարկվել է վերը նշված համաձայնագրի շտկված տարբերակը:

15.03.2021թ-ին փոստային առաքման միջոցով ստացել ենք ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի Ձեր կողմից հաստատված երկու բնօրինակները, որոնցում առկա են եղել թերություններ՝

1) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի *չափաբաժնի համարը* սյունակում նշված է **1** թիվը, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

2) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի *գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)* սյունակում նշված է **35121320** կոդը, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

3) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի ապրանքի *անվանումը* սյունակում նշված է **համակարգիչներ, պատճենահանող սարքավորումներ և սերվերներ,** որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

4) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի ընդհանուր գին սյունակում նշված է **6085000** ՀՀ դրամ, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն № Ε/40/647-21 առ 17.03.2021թ գրությամբ վերը նշված թերություններով Ձեր կողմից վավերացված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի բնօրինակները՝ հետ է վերադարձրել, առաջարկելով շտկել թերությունները և սահմանված ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաստատմանը ներկայացնել շտկված համաձայնագիրը: Սակայն սահմանված ժամկետում շտկված համաձայնագրերի բնօրինակները Ձեր կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ չի ստացվել:

Համաձայն պայմանագրի

- 8.12 կետի «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: **Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է**»:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2021թ. փետրվարի 5-ին կնքված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 պայմանագրի վերոգրյալ դրույթը և վերը նշված փաստերը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մասնակի միակողմանի լուծում է «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 պայմանագիրը՝ 4-րդ չափաբաժնի մասով:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Գ. Երիցյան
ԳԲԲ մասնագետ
Հեռ. 010-20-04-91